ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 15-Ն

28 ապրիլի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.4-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄԷ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ –0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ԶԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------

Ժ. ԱԼԵՔՅԱՆ ---------- ---------- ----------

Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ ---------- ---------- ----------

Ն. ՍԱՐՈՅԱՆ ---------- ---------- ----------

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ ---------- ---------- ----------

Մ. ԵՆՈՔՅԱՆ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<28>> ապրիլի 2023 թ.
քաղաք Մարալիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի
ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի
N 15-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ/«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում, համայնքի բնակավայրերում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը:

2. Թույլտվությունները՝ համաձայն սահմանված ձևաչափի, տրվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից /Ձև N 2/:

3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ՝ համաձայն սահմանված ձևաչափի /Ձև N 1/:

4. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի որոշմամբ:

5. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:

6. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը՝ հայտատուի կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ վճարման օրվանից (եթե հայտատուի կողմից այլ ժամկետ չի նշվում):

7. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտի մերժման վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

8. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում հայտը չմերժվելու դեպքում այն համարվում է բավարարված:

9. Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ _____ - 000000

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ _____

Տրված՝ _____ **20 թ.**

Թույլատրված գործունեության անվանումը՝

_____.

Հայտատու անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

_____.

Գործունեության տեսակի իրականացման վայրը,

_____.

Շինության տեսակը՝

_____.

Թույլտվության գործողության ժամկետը՝

_____ *20* -ից մինչև _____ *20* -ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

Ձև N 1

.....համայնքի
ղեկավար.....ին

ՀԱՅՏ

_____ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը և կազմակերպաիրավական ձևը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը
.....
.....
2. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը
.....
.....
3. Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը, հեռախոսահամարը, կապի այլ միջոցներ
.....
.....
4. Գործունեության տեսակը, որի իրականացման համար թույլտվություն ստանալու մասին հայտ է ներկայացվում
.....
.....
5. Թույլտվության ժամկետը.....
(նշել պահանջվող ժամկետը)

Ներկայացվող փաստաթղթերի ցանկ

№	Փաստաթղթի անվանումը	Կցված է (կատարվում է✓նշումը)
1.	Հայտ՝ լրացված սահմանված ձևով	
2.	Հայտատու իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը, ՀՎՀՀ, բանկային վավերապայմաններ	
3.	Հայտատու անհատ ձեռնարկատիրոջ (ԱՁ) պետական հաշվառման վկայականի և անձը հաստատող փաստաթղթի պատճենը	
4.	Հայտատու ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը	
5.	Գործունեության իրականացման վայրի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը	
6.	Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիր	
7.	Տեղեկանք՝ համայնքի բյուջեի նկատմամբ պարտավորությունների մասին	
8.	Այլ	

Ստորագրելով այս հայտը՝ չեմ առարկում և տալիս եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման համար:

Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:

Ցանկանում եմ ծառայության տրամադրման հետ կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ
□էլեկտրոնային փոստի միջոցով
□ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով
□պատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Հայտատու՝ ---------- ---------- (ստորագրություն)
(հայտատուի անուն, ազգանուն)

----- ---------- 20-- թ.